ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

<<ԱՄԱՍԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028 թթ.

ԱՄԱՍԻԱ 2023

Բովանդակություն

Բովանդակություն----------2
Օրենսդրական կարգավորումներ---------- 3
ՆԱԽԱԲԱՆ---------- 4
ՈՒՍՈՒՄԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ----------5
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ---------- ----------8
1.Նորմատիվ փաստաթղթեր---------- 15
2.Կառավարման և խորհրդակցական մարմիններ---------- 16
3.Դպրոցի համագործակցությունը առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ----------18
4.Ուսումնական միջավայրը----------19
5. Մանկավարժական համակազմը----------21
6. Կրթության որակը----------24
7. Նորարարություն և տեխնոլոգիաներ----------25
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ----------27
ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ----------28
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ----------29
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ----------55
ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ----------56
ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԶԴՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ----------57
ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ----------58
ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ. ՏԵՍԼԱԿԱՆ---------- 61

Օրենսդրական կարգավորումներ

- <Կրթության մասին> օրենք
- <Հանրակրթության մասին> օրենք
- <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> օրենք
- <Լիցենզավորման մասին> օրենք
- <Ստանդարտացման մասին> օրենք
- ՀՀ կառավարության 25.07.2002թ. N 1392-Ն որոշում
- ՀՀ կառավարության 04.06.2020թ. N 914-Ն որոշում
- ՀՀ կառավարության 24.08.2006թ. N 1262-Ն որոշում
- ՀՀ կառավարության 22.09.2022թ. <Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը,պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին> N 1481-Ն որոշում
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 07.12.2022թ. <Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին> N 79-Ն հրաման
- ՀՀ կառավարության 23.07.2015թ. <Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2035 թվականների ծրագիրը հաստատելու մասին> N 797-Ն որոշում
- ՀՀ առողջապահության նախարարի 28.05.2017թ. N 12-Ն հրաման
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 26.08.2022թ. N 21-Լ
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 22.09.2022թ. N 35-Ն հրաման
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 18.04.2023թ. N 399-Ա հրաման

ՆԱԽԱԲԱՆ

Դպրոց բոլորի համար. Յուրաքանչյուր երեխա արև է, հնարավորություն տանք նրան լույս տալու:

Որպես հասարակության ռազմավարական ռեսուրս կրթության դերի նոր ընկալումն ապահովում է հասարակության առաջընթացը բոլոր ոլորտներում և պահանջում համակարգային փոփոխություններ կրթության մեջ: Դպրոցը՝ որպես կրթության հիմնական և ամենաերկար փուլ, դառնում է կրթության նոր որակի ապահովման առանցքային գործոն, որից կախված է յուրաքանչյուր անձի, ինչպես նաև հասարակության հետագա կյանքի հաջողությունը:

Ժամանակակից դպրոցի մոդելը պետք է համապատասխանի տնտեսության և սոցիալական ոլորտի նորարարական զարգացման առաջատար նպատակներին, ապահովի երկրի բարեկեցության աճը և նպաստի մարդկային ներուժի ձևավորմանը:

Կրթության ժամանակակից սկզբունքներ ասելով նախևառաջ հասկանում ենք այն 4 հիմնական սկզբունքները, որոնք ձևակերպվել են 21-րդ դարի կրթության միջազգային հանձնաժողովում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ներկայացված զեկույցում՝

- *սովորել ապրել (կյանքի սկզբունքը),*
- *սովորել միասին ապրել,*
- *սովորել ձեռք բերել գիտելիքներ (խորը և ամբողջ կյանքի ընթացքում),*
- *սովորել աշխատել (կատարելագործել մասնագիտական կարողությունները, ձեռք բերել հմտություններ, որոնք հնարավորություն կտան հաղթահարել տարբեր իրավիճակներ):*

Ժամանակակից աշխարհում հանրակրթության ոլորտում կարևոր են դառնում ստեղծագործելու ունակությունը, քննադատական մտածելակերպը, թիմային աշխատանքը, բարդ խնդիրներին հնարավոր լուծումներ տալը: Միայն գրել-կարդալը,

հաշվելը, վերարտադրելն արդեն բավարար չեն կարող համարվել: Մեր դպրոցի առաքելությունն է ձևավորել ուսումնական, սոցիալ-հոգեբանական այնպիսի միջավայր, որը կնպաստի հաջողակ և մրցունակ երիտասարդների և անհատների ձևավորմանը, ովքեր կհաջողեն թե՛ որպես հասարակության լիիրավ անդամ և թե՛ որպես հետագա մասնագիտական ուղին շարունակող հասուն երիտասարդներ: Յուրաքանչյուր սովորող եզակի է իր ուրույն տաղանդով և ուսման ոճով և, որպես այդպիսին, պահանջում է բազմատեսակ մանկավարժական ռազմավարություններ՝ սովորողի ուսուցման որակը առավելագույնի հասցնելու համար:

Ուսումնական հաստատության գործունեությունը

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը»:

Հանրակրթական դպրոցի առաքելությունը իր սովորողներին ազգային հենքի վրա որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել բուհերում, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջնակարգ–մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում:

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր

երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Ժամանակակից տեխնիկայի զարգացումը մեր հասարակության անդամներից պահանջում է արտադրական տեխնոլոգիաների հիմունքների իմացություն, աշխատանքի նկատմամբ գիտակից վերաբերմունք և ստեղծագործական մոտեցում:Պոլիտեխնիկական կրթության իրականացումն աշակերտներին հնարավորություն է տալիս հետագայում, արտադրական կամ այլ տեխնիկական, այդ թվում՝ ռազմատեխնիկական բնագավառում գործունեություն ծավալելիս ազատորեն դրսևորելու իրենց գիտելիքները մեքենաների և մեխանիզմների, արդի տեխնիկայի և տեխնոլոգիաների, արտադրական գործընթացների վերաբերյալ: Այդ նպատակով կարևորում ենք ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա առարկաների ուսուցանումը: Դպրոցի առաքելությունը մշակելիս հաշվի ենք առել մեր երկրի աշխարհաքաղաքական դիրքը, տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրավիճակը, արդի մարտահրավերները: Ըստ այդմ էլ ուսումնական հաստատության գործունեությունը նկարագրելիս կարևոր ենք համարում՝

- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի հիմնախնդիրներով մտահոգ դպրոցի ձևավորումը, համայնքային հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունների նախաձեռնումը, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ձևավորումը.
- Սովորողների կարողությունների ու հմտությունների զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովուը:
- Հայրենապաշտ անհատի, քաղաքացիական հասարակության ակտիվ անդամի ձևավորումը:
- Բազմաբնույթ մտածողության չափանիշներին համահունչ՝ սովորողների և մանկավարժների համար գրավիչ, բարենպաստ կրթական միջավայրի ապահովումը:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության **«Ամասիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ.** գրանցվել է ՀՀ իրաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում՝ 2003թ.: Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 13.03.2013թ. №190-Ա/Ք հրամանի տրված է լիցենզիա №0935,0939,0760:

Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային

Դպրոցի ստեղծման տարեթիվը՝ 1989, որպես դպրոց՝ 1991
Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 1991թ.
Դպրոցի շենքի տիպը՝տիպային
Հարկայնությունը՝ 2 հարկանի
Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց
Ինտերնետ կապի առկայությունը՝ առկա է
Հասցեն ՝ՀՀ Շիրակի մարզ, 2701,Ամասիա համայնք, գյուղ Ամասիա, 24 փողոց,1-ին փակուղի,շենք 3 :

Դպրոցում առկա են.

- դասասենյակ՝ 12
- առարկայական լսարաններ՝ 3
- գրադարան՝ ընթերցասրահով՝ 1
- մարզադահլիճ՝ 1
- ճաշարան՝ 1
- բուժկետ՝ 1

- լաբորատորիա՝ 2
- առանձնասենյակ՝ 9
- հանդիսությունների դահլիճ՝ 1
- «Արմաթ» ինժեներական լաբորատորիա՝1
- Բացօթյա սպորտհրապարակ՝1
- Գրադարանի ֆոնդը՝4421 կտոր գիրք։

Դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական ընդհանուր -92 սահմանային տեղով
- Հիմնական ընդհանուր - 100 սահմանային տեղով
- Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական գործունեություն - 60 սահմանային տեղով

Դպրոցն իրականացնում է եռաստիճան կրթություն

- տարրական դպրոց I – IV դասարաններ
- միջին դպրոց V-IX դասարաններ
- ավագ դպրոց X-XII դասարաններ

2022-2023 ուստարում դպրոցում գործում է 12 դասարան, որտեղ սովորում են թվով 216 աշակերտ։

Դպրոցում ներառական կրթություն իրականացվում է 2019-2020 ուստարվանից։Դպրոցում սովորում են ԿԱՊԿՈՒ 3 սովորող։ Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների կրթության բարելավմանը աջակցում են դպրոցի բոլոր մանկավարժները, ուսուցչի օգնականները և ՏՄԱԿ-ը։

Դպրոցում աշխատում են բարձրագույն մասնագիտական կրթությամբ 23 ուսուցիչ-մանկավարժ:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլանավորում: Խորհուրդները գործում են օրենքով սահմանված իրենց իրավասությունների սահմաններում:

Ծնողական խորհուրդը կազմված է 12 անձից:

Աշակերտական խորհուրդը կազմված է 14 անձից:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը,	Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան,
կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեությունը,	դպրոց-համայնք կապը և համագործակցությունը,
աշակերտական համակազմը,	դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը,
մանկավարժական համակազմը,	մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողների պակասը,
համագործակցությունը կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ,	մարզադահլիճի գույքի սակավություն, տաք ջրի բացակայություն, ջերմային ռեժիմի խախտում,
ուսումնական միջավայրը,	լաբորատորիաների գույքի, նյութերի, սարքավորումների սակավությունը,

բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը:	ՏՀՏ-ների ներդրման և նորամուծությունների կիրառման ցածր մակարդակ:
1. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր	*Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր*
• Դպրոցի վարչական կազմն աշխատում է կոորդինացված, արդյունավետ, կա աշխատանքի հստակ բաժանում, ինչը տեսանելի է դարձնում յուրաքանչյուրի կատարած աշխատանքը, թույլ տալիս գնահատել այն, արագ գտնել թերությունները և շտկել:	
• Դպրոցի ուսուցչական կազմն օժտված է մասնագիտական բարձր կարողություններով, շատերն ունեն աշխատանքային հարուստ փորձ, սկսնակ ուսուցիչները համագործակցում են տարիների փորձ ունեցող մանկավարժների հետ:	• որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչների պակասը
2. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության ուժեղ կողմեր	*Սովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմերը*
• Աշակերտների մի մասը մոտիվացված է, հավատում է, որ իր ջանքերը կբարելավեն իր կատարողականությունը: • Սովորողներն ակտիվորեն մասնակցում են դպրոցում գործող խմբակներին, «Արմաթ»	• Ուսուցման ձանձրալի մեթոդները, • մոտիվացիայի պակաս, • աշակերտներն ունեն այլ առաջնահերթություններ:

ինժեներական լաբորատորիայի պարապմունքներին:	
3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր	*Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի այլ մարմինների գործունեության թույլ կողմեր*
• Դպրոցի ծնողական համակազմը աջակից է ուսուցչական համակազմի նախաձեռնություններին:	• Դպրոցի ծնողական խորհրդի որոշ անդամներ անարդյունավետ են մասնակցում կամ ընդհանրապես չեն մասնակցում դպրոցի առօրյային, սահմանափակվում են միայն ծնողական ժողովներին իրենց երեխաների առաջադիմության մասին տեղեկանալով: Կառավարման խորհուրդը ծանոթանում է դպրոցում առկա խնդիրներին, սակայն չունի բավարար լծակներ դրանց լուծմանն աջակցելու համար:
4. Ռեսուրսներով ապահովվածությունը	*Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները*
• Դպրոցն ապահովված է լուսավոր դասասենյակներով, ունի քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ, առանձնացված դասարաններ շախմատ, ինֆորմատիկա, ՆԶՊ առարկաների համար , պրոյեկտոր, սպորտային մարզադահլիճ, ճաշարան:	• Լաբորատորիաների, ճաշարանի, մարզադահլիճի և դասասենյակների գույքը թարմացման կարիք ունի:Դպրոցը չունի արհեստանոց, որտեղ կանցկացվեն տեխնոլոգիայի դասաժամերը: Համակարգչային դասասենյակն ունի նոր համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակի, տեսախցիկների կարիք:
5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները	*Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը*
• Դպրոցում հաճախ են կազմակերպում միջոցառումներ: Դպրոցն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ նախկին շրջանավարտների և դպրոցի ծնողական համակազմի համար լուսաբանվում են դպրոցի բոլոր նշանակալից իրադարձությունները:	• Դպրոցն ունի բազմաթիվ նոր ու հետաքրքիր նախաձեռնություններ, որոնք իրականացնելու համար անհրաժեշտ են նյութական մեծ միջոցներ, սակայն դպրոցը չունի այդ միջոցները տրամադրող բարերարներ, իսկ նախկին շրջանավարտները չեն խրախուսում դպրոցի նախաձեռնությունները իրենց միջոցներով:

6.Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը	*Հաղորդակցության, համագործակցությոան թույլ կողմերը*
• Դպրոցը համագործակցում է թե՛ միջազգային, թե՛ տեղական հասարակական կազմակերպությունների հետ:	• Դպրոցը կարող է համագործակցել հասարակական ավելի լայն շերտերի հետ, օրինակ՝ տարբեր մասնագիտությունների տեր անձանց, մանկագիրների, երաժիշտների, կոմպոզիտորների, մեծանուն մարդկանց հետ: Անհրաժեշտ է ավելի հաճախ կազմակերպել այցելություններ արվեստի օջախներ, թատրոններ, պատմամշակութային վայրեր:
7.Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները	*Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված դժվարություններն ու խնդիրները*
	• Բյուջեն բավարար չէ շատ ծախսեր ֆինանսավորելու համար: • Դպրոցը հոգաբարձուների խորհուրդ և հովանավորներ չունի: • Ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում
Հնարավորություններ	*Վտանգներ*
• Դպրոցը հնարավորություն ունի տալու որակյալ և կայուն կրթություն բոլոր աշակերտներին, ապահովելու նրանց անվտանգ միջավայրը,	• Տարերային խոշոր աղետների դեպքում առկա են վտանգներ: • Դպրոցի շենքը տիպային չէ, ունի ոչ բարվոք վիճակում գտնվող ապաստարան: • Ջեռուցման համակարգը կարիք ունի հիմնանորոգման:

• Դպրոցը հնարավորություն ունի ծավալելու կրթական այլ ծառայություններ, սակայն չկան համապատասխան ֆինանսական միջոցներ դրանք իրականացնելու համար(լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում, արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում, սովորողների սննդի կազմակերպում)	• Դպրոցի հիմնավերանորոգման համար անհրաժեշտ են գումարներ, դրանք կարող են տրամադրել բարերարները : Սակայն այսօր հասարակությունը անտարբեր է դարձել դպրոցի խնդիրների նկատմամբ, իսկ նման անտարբերությունը վտանգավոր է հասարակության համար, քանզի խաթարվում է սերունդների բնականոն կապը, իսկ դպրոցն այդ կապն ապահովող այն կառույցն է, որ մշտապես պետք է գտնվի հասարակության յուրաքանչյուր անդամի ուշադրության կենտրոնում:
• Դպրոցի զարգացման համար հարկավոր է նրա առջև բացել լայն հնարավորություններ, դպրոցը պիտի լինի ոչ միայն աշակերտների, այլ նաև ողջ համայնքի կրթամշակութային կենտրոնը, կրթադաստիարակչական աշխատանք կատարի աշակերտների և նրանց ծնողների, համայնքի բոլոր բնակիչների հետ:	• Այսօր ուսուցիչը միայնակ է մնացել սերնդակրթության դժվարին աշխատանքում: Շատ ծնողներ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով չեն զբաղվում երեխաների կրթադաստիարակչական աշխատանքներով, իրենց թերացումների պատճառները փնտրում են դպրոցի վատ աշխատանքի մեջ, չեն աջակցում ուսուցիչների աշխատանքին, ոմանք նույնիսկ խրախուսում են երեխաների բացակայությունը:

1.Նորմատիվ փաստաթղթեր

Դպրոցն ունի ԿԳՆ կողմից հաստատված պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և աշխատանքի ընթացքում լուրջ դժվարություններ չեն առաջացնում:

Հայաստանի Հանրապետություն հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը:

1. Էլեկտրոնային դասամատյաններ
2. Աշխատողի անձնական Էլեկտրոնային գործ
3. Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, գիտելիքների ստուգման արձանագրություններ
7. Էլեկտրոնային հաստիքացուցակ
8. Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ
9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն.
10. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով

12. Դասալսումների արդյունքների արձանագրություն

13. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով

14. Սովորողների շարժի մատյան

Այս փաստաթղթերը լրացվում են ըստ խորհրդակցական մարմնի կանոնադրության:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Երբեմն գործածության ենթակա փաստաթղթերի կազմման ժամանակ առաջանում են որոշակի խնդիրներ. շատ աշխատատար են, ժամանակատար:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻՑ ԲԽՈՂ ՆՊԱՏԱԿ

Ապահովել ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին :

2. Կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորված են խորհրդակցական մարմիններ՝ ***մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ:***

Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը: Խորհուրդներն ունեն

իրական ինքնավարություն, ազատ են իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Խորհրդակցական մարմինների գործունեությունը ձևական չէ, աշխատում են լիարժեք կատարել իրենց պարտականությունները, որից շահում են դպրոցի ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացները:

Մանկավարժական խորհուրդը հավանություն է տալիս տարեկան աշխատանքային պլանին, ուսումնական պլանին, դասաբաշխմանը:

Առարկայական մեթոդական միավորման նախագահը կազմակերպում է նիստեր, արդյունավետ աշխատանք, վերլուծություն, ուսուցում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Դպրոցի տնօրենը պետք է գնահատի և ժամանակին միջոցներ ձեռնարկի խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻՑ ԲԽՈՂ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Մանկավարժական խորհրդի անդամների համար կազմակերպել խորհրդակցություններ՝ նրանց դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու համար:

Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպել սեմինարներ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով և զարգացնել առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

3.Դպրոցի համագործակցությունը առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Ստորև ներկայացված Գծապատկերը արտահայտում է այդ համագործակցության տեսլականը:



4. Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է:

Դպրոցը ձգտում է, որ

- դասասենյակները և առարկայական կաբինետները վերանորոգված և կահավորված լինեն նոր՝ ժամանակակից գույքով,
- ստեղծվի աշակերտների գիտելիքների ստուգման հարցաշարերի բանկ և պարբերաբար կիրառվի այն,
- ապահովված լինի դասագրքերով և այլ ուսումնական գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,
- դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
- դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու մշակույթ:

Ծնողների և երեխաների սոցիալական պատվերը նկարագրված է դպրոցի ուսումնական ծրագրում, արտացոլված ուսումնական պլանում և իրականացվում է ուսումնառության ընթացքում: Այս պահանջը դրված է նաև ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հիմքում: Դրա արդյունքում աշակերտներն ունեն ուսումնական հաջողություններ, որը տոկոսային հարաբերությամբ ներկայացվում է դպրոցի ներքին գնահատման ժամանակ:

Դպրոցի ուսումնական պլանը դպրոցի հիմնարար փաստաթղթերից է, որը ապահովում է դպրոցի կողմից պետական և

հանրային պատվերի կատարումը: Դպրոցի ուսումնական պլանը կազմվում է ըստ սովորողների, ոչ թե ըստ ուսուցիչների կարիքների: Դպրոցն ապահովում է ուսումնական պլանի համապատասխանությունը սովորողների կարիքներին:

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթական համակարգի կարևորագույն ռազմավարական խնդիրն է, քանզի կրթության գերնպատակն անձի կայացումն է: Միևնույն ժամանակ դաստիրակությունը պետության պարտավորությունն է իր քաղաքացիների առջև՝ ապահովելու անձի լիարժեք զարգացումն ու ինքնադրսևորումը: Դաստիարակության նպատակն է՝

- ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը:

Երեխաների դաստիարակության համար հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները: Ծնողական խնամքից զրկված, ինչպես նաև անբարենպաստ ընտանիքների երեխաների դաստիարկության պատասխանատվությունը կրում են տեղական ինքնակառավարման մարմինները և պետական կրթական ու խնամակալական հաստատությունները:

Պետությունն՝ ի դեմս կրթական հաստատությունների՝ երեխաների դաստիարակման գործում աջակցում է ծնողներին, պետական հաստատություններում ստեղծում դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Դպրոցն աշխատում է հետևողականորեն զարգացնել դաստիարակության գործընթացը: Երբ այդ հարցում դպրոցի կողմից պասիվություն է հանդես բերվում, տուժում է աշակերտների վարքը, կարգապահությունը, ուսման նկատմամբ

հետաքրքրությունը, ծնողները սկսում են քիչ հետաքրքրվել իրենց երեխաների ուսման հաջողություններով, համարում են, որ դպրոցը չի կատարում իր պարտականությունները:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻՑ ԲԽՈՂ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Բարելավել դպրոցում իրականացվող դաստիարակչական աշխատանքը՝ մշակելով և ներդնելով արդյունավետ մեխանիզմներ:

5. Մանկավարժական համակազմը

<<Գալիքը դպրոցական ուսուցչի ձեռքերում է>>... Վիկտոր Հյուգո

Դպրոցում աշխատում են բարձրագույն մասնագիտական կրթությամբ 23 ուսուցիչ-մանկավարժ:

2022-2023 ուստարում դպրոցում գործում է 12 դասարան, որտեղ սովորում են թվով 216 աշակերտ:

Դպրոցում ներառական կրթություն իրականացվում է 2019-2020 ուստարվանից:Դպրոցում սովորում են ԿԱՊԿՈՒ 3 սովորող: Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների կրթության բարելավմանը աջակցում են դպրոցի բոլոր մանկավարժները, ուսուցչի օգնականները և ՏՄԱԿ-ը:

Դպրոցի մանկավարժները՝

- Ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն,
- ունեն աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ,

- ուսուցման գործընթացում կիրառում են դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալ բավարար գիտելիքներ, ձեռք բերել անհրաժեշտ կարողություններ և հմտություններ,
- գիտեն գնահատման մեթոդաբանությունը և կարողանում են այն կիրառել,
- գիտեն առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում են չափորոշիչներով,
- իրենց աշխատանքում պատասխանատու են և պարտաճանաչ, նպաստում են դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսումնասիրում են գոյություն ունեցող փորձը և տարածում են իրենցը,
- գիտեն տարիքային հոգեբանությունը,
- գիտեն և հարգում են երեխաների իրավունքները,
- պահպանում են մանկավարժական էթիկայի կանոնները:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Որոշ ուսուցիչներ հաշվի չեն առնում, որ ուսուցումը հնարավոր չէ կազմակերպել միայն դասավանդվող առարկայի ուսումնական նյութը լավ իմանալով, նրանք դասապրոցեսի ընթացքում քիչ են օգտագործում ուսուցման ակտիվ մեթոդներ, նոր տեխնոլոգիաներ, չեն գնահատում մեթոդների արդյունավետությունը: Զարագացնելով իրենց մանկավարժական և մեթոդական գիտելիքները, կարող են էապես բարձրացնել ուսուցման արդյունավետությունը:

Ուսուցիչները համարում են, որ գնահատման մեթոդաբանությունը ոչինչ չի տալիս, պարզապես կրկնում է հինգ միավորային համակարգի սանդղակավորումը 10-ի համար: Սա բերում է սուբյեկտիվ մոտեցման. աշակերտները չեն

հասկանում գնահատման տրամաբանությունը և տարբեր ուսուցիչների մոտ նույն պատասխանի համար ստանում են տարբեր գնահատականներ:

Երբեմն ուսուցիչը, հաշվի չառնելով աշակերտի նախնական գիտելիքները, փորձում է նրանց սովորեցնել նոր նյութը: Դա իհարկե չի ստացվում, և աշակերտների մոտ առաջընթաց չի նկատվում: Սա բերում է աշակերտների ինքնագնահատականի անկման և հուսահատության: Մինչդեռ հակառակ պատկերն է ստացվում, երբ ուսուցիչը հաշվի է առնում աշակերտների նախնական գիտելիքները, վերանայում է թեմատիկ պլանավորումը, դասն այլ կերպ է պլանավորում, այլ նպատակներ է ընտրում տվյալ դասի համար և սկսում է զարգացնել աշակերտների գիտելիքները՝ լրացնելով նախկինում չյուրացվածը: Հակառակ դեպքում ետ մնացող աշակերտները սահմանափակում են ուսուցիչներին զարգացնել դասարանի մյուս աշակերտների ուսումնական հաջողությունները, և դասարանը սկսում է փոխել իր առաջադիմությունը:

Երբեմն ուսուցիչները, հաշվի չառնելով աշակերտի՝ ուսման նկատմամբ ունեցած վերաբերմունքը, ընդունակությունները, տարիքային և սոցիալական առանձնահատկությունները, նրանց հետ ուսուցումը կազմակերպում են միևնույն ձևով: Դա աշակերտների մեջ առաջացնում է անհամաձայնություն և դժգոհություն:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻՑ ԲԽՈՂ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Բարձրացնել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը վերը նշված խնդիրների ուղղությամբ: Խրախուսել մանակավարժներին կամավոր ատեստավորմանը մասնակցելիս, օգտագործել ԿԶՆԱԿ-ի ընձեռած հնարավորությունները,կազմակերպել փորձի փոխանակման հանդիպումներ:

Նոր չափորոշիչների ներդրումով կհարթվի նաև գնահատման խնդիրը.մինչև 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակը միավորային գնահատում չի լինի, փոխարենը սովորողների գնահատումը կիրականացվի բնութագրիչներով, որը ենթադրում է գիտելիքի մակարդակի որակական սահմանում: Բացի այդ՝ չեղարկվում է անբավարար գնահատականի

շեմը:

Զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները՝ սովորողների նախնական գիտելիքները որոշելու համար:

Զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները՝ սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար:

Զարգացնել դպրոցի հոգեբանական ծառայությունը՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:

6. Կրթության որակը

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները:

Կարևոր է հասկանալ, թե ինչպես կարելի է տեղեկություններ տալ կրթության որակի մասին: Դրա համար օգտակար կարող են լինել հետևյալ չափանիշները:

1. ***Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:***

Դպրոցը սահմանել է ուսումնական գործընթացի նպատակներ և խնդիրներ, կիրառում է համապատասխան տեխնոլոգիաներ, ուսուցումը ձգտում է համապատասխանեցնել աշակերտների կարիքներին, պետական և առարկայական չափորոշիչներին, ապահովված է անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական նյութերի, սարքավորումների որոշակի քանակով, ուսումնական տարածքով, գույքով:

2. ***Կրթական գործընթացի կատարողականը:***

Կրթական գործընթացում հանձնարարությունները, կազմակերպական գործողությունները կատարվում են ժամանակին և հնարավորինս անսխալ, մշակված է մանկավարժների աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ, կատարվող աշխատանքները ձևական չեն, միշտ վերլուծվում են ուսումնական և աշխատանքային պլանից շեղվելու պատճառները, մշակվում են դրանց ուղղման գործողություններ, վերացվում են սխալները և դրանց հետևանքները:

3. ***Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում:***

Հանրակրթական բոլոր աստիճաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է արդյունավետ: Ճիշտ են սահմանված կրթական աստիճանների համագործակցությունը և փոխկապակցվածությունը, սակայն գործնականում կրթության որակը բարելավման կարիք ունի:

4. ***Դասերի, ուսումնական միջոցառումների որակը:***

Դպրոցի մանկավարժների կողմից դասերը, միջոցառումները պլանավորվում են և համապատասխանում են նպատակին: Դասերը վերլուծվում են, կատարվում է թերությունների վերացման ուղիների մշակում:

7. Նորարարություն և տեխնոլոգիաներ

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի են խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ վերահսկում է ուսուցչի աշխատանքը, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալիս և ապահովում նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ուսուցիչները համարում են, որ ՏՀՏ կիրառումը դասի ընթացքում ձևական է, դժվար իրականացվելի, ժամանակատար և շեղում է աշակերտների ուշադրությունը: Ավագ սերնդի ուսուցիչները համարում են, որ ՏՀՏ-ների կիրառումը երիտասարդների գործն է: ՏՀՏ-ների կիրառման անջրպետը ուսուցիչների և աշակերտների միջև վնասում է ուսուցչի հեղինակությանը, նվազեցնում ուսուցման կազմակերպման այլընտրանքային և արդիական հնարավորությունները:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻՑ ԲԽՈՂ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Զարգացնել ուսուցիչների՝ ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման հմտությունները:

Դպրոցում իրականացնել ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի փորձարկում և համատեղ դասավանդում՝ հիմնված սովորողների անհատական առաջընթացի պլանավորման վրա:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Մասնակցություն հանրակրթական այլընտրանքային (միջազգային, փորձարարական, հեղինակային) ծրագրերին առանձին բովանդակային, կրթական տեխնոլոգիաների կամ ուսուցման կազմակերպման ոչ ավանդական ձևերի ուղղությամբ,
- դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում,
- դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում,
- դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարձրացում,
- սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրում,
- սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում,
- ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- կրթության մատչելիության ապահովումը, դպրոցում այնպիսի հոգեբանամակավարժական միջավայրի ձևավորումը, որը թույլ կտա յուրաքանչյուր աշակերտի իր հնարավորություններին և հակումներին համապատասխան յուրացնել կրթական ծրագիրը և լինել հաջողակ,
- դպրոցի կառավարման ժողովրդավարացում, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Արձագանքել գիտական և մշակութային փոփոխություններին և այդ փոփոխություններին համահունչ՝ դպրոցում ներդնել նորարարական մոդելներ:
- Հարստացնել դպրոցի նյութատեխնիկական բազան՝ դպրոցի խնայված միջոցների, լրացուցիչ ֆինանսական աղբյուրների հաշվին:
- Կատարելագործել դպրոցի դաստիարակչական համակարգը՝ սերտ կապեր ստեղծելով դպրոցի կառավարման մարմինների միջև և նրանց ընդգրկելով այդ գործընթացում:
- Զարգացնել ուսուցիչների՝ դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողությունները:
- Ուսուցիչների մեջ ձևավորել ուսուցանող գնահատման իրականացման բավարար հմտություններ:
- Զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունները:
- Օգտագործելով դպրոցի ուսումնական նյութերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ստեղծելով նորերը՝ սերտ կապ ստեղծել սովորողների տեսական և գործնական գիտելիքների միջև:
- Դպրոցի կառավարման ժողովրդավարացման, դպրոցի զարգացման գործում ընդգրկել ծնողների և համայնքի ներուժը՝ բարձրացնելով կառավարման արդյունավետությունը՝ նրանց ընդգրկելով կարևոր որոշումների կայացման, քննությունների

անցկացման, խրախուսման, միջոցառումների, ուսումնաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման և անցկացման, համայնքային խնդիրների լուծման և այլն հարցերում:

ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

№	Ենթանպատակ	Հիմնախնդրի նկարագրություն, գործողության կարևորության հիմնավորում	Գործողության նկարագրություն՝ ակնկալվող արդյունքներով	Կատարողներ						
				ՀՀ կառ., ԿԳՄՄՆ	Դպրոց	Ծնողներ	ՏԻՄ /Համայնք	Դոնոր/ՀԿ	Բարեգործ	Այլ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	Նպատակ 1 Ուսումնանյութական բազայի բարելավում									
1	Շենք-շինությունների կառուցում կամ վերանորոգում	Դպրոցի բակի և մարզահրապարակի ոչ բավարար վիճակ, ռազմագիտության պարապմունքների դաշտի	Դպրոցը սկսվում է բակից: Վերանորոգված բակը, մարզահրապարակը դպրոցը կդարձնեն գրավիչ թե՛ սովորողների, թե՛ ծնողների համար:Կլուծվեն սովորողների անվտանգության և դպրոցի մաքրության	v			v			v

		բացակայություն, թեքահարթակի բացակայություն	պահպանման խնդիրները: Դպրոցի մարզադահլիճում անցկացվող ռազմամարզական ստուգատեսներին մասնակցում են համայնքի տարբեր դպրոցների սովորողներ: Վերանորոգված մարզադահլիճը իր գործառույթները առավել արդյունավետ կիրագործի: ԿԱՊԿՈՒ սովորողների համար կստեղծվի հարմարեցված միջավայր:							
2	Էներգաարդյունավետություն և էներգախնայողության բարելավում, էներգիայի վերականգնվող աղբյուրների կիրառում	Մարզադահլիճում և սանհանգույցներում տաք ջրի բացակայություն	Արևային մարտկոցների լիարժեք շահագործմամբ հնարավոր կլինի լուծել խնդիրը՝ պահպանելով սովորողների առողջ ապրելակերպը և խնայելով դպրոցի միջոցները	v					v	v
3	Ջեռուցման համակարգի բարելավում	1.Դպրոցի միջանցքները մասամբ են ջեռուցվում, ջերմային անհրաժեշտ ռեժիմը չի պահպանվում: 2. Ջեռուցման մարտկոցները հին համակարգի են	Ջեռուցման համակարգի բարելավմամբ նվազագույնի կհասցվի ջերմության արտահոսքը, կպահպանվի համարժեք ջերմային ռեժիմը: Նոր մարտկոցները կապահովեն գումարի և վառելիքի տնտեսում:	v						v
4	Սանհանգույցների բարելավում	Սանհանգույցներում սանտեխնիկայի մաշվածություն, ոտնակով	Մասնակի վերանորոգումը կնպաստի սանհանգույցների անխափան աշխատանքին: Սանիտարահիգիենիկ պայմանները	v						v

		աղբամանների բացակայություն	կբարելավվեն, սովորողները զերծ կմնան վիրուսներից:							
5	Սանիտարա-հիգիենիկ պայմանների ապահովում	Ախտահանիչ նյութերի ոչ բավարար քանակ	Ախտահանիչ նյութերի բավարար առկայությունը կկանխարգելի վիրուսների տարածումը, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման մշակույթ կձևավորվի:	v	v					v
6	Մարզադահլիճի պայմանների բարելավում և մարզագույքով ապահովում	Մարզադահլիճի կոսմետիկ վերանորոգում, հատակի ներկում, գծանշում, նոր մարզագույքի ձեռքբերում /հեծանիվ, մարզափայտ, կոն, կանգնակ, մարզական ներքնակներ և այլն./	Հիմնախնդրի լուծումը կստեղծի ուսումնառության անվտանգ, բարենպաստ միջավայր, մարզական միջոցառումների բազմազանությունը ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի համակողմանի խնդիրներ կլուծի;	v						V

7	Լաբորատոր պայմանների բարելավում, անհրաժեշտ նյութերով և պարագաներով համալրում	ՈՒսումնական գործընթացը կաբինետային համակարգով չի իրականացվում: Տևական ժամանակ լաբորատորիաները չեն հարստացվել անհրաժեշտ նյութերով	1.Տեսական գիտելիքների ամրապնդում ցուցադրություններով, դիտարկումներով: 2.Սովորողների կարողությունների, հմտությունների, տրամաբանական մտածողության զարգացում, դասը իրական կյանքի հետ կապելու հնարավորությունների ընձեռում:	v				v		
8	Գրադարանի պայմանների բարելավում և գրաֆոնդի համալրում	Գրադարանը չունի համակարգիչ	1.Գրադարանային ֆոնդը որպես տեղեկատվության աղբյուր կօգտագործվի սովորողների կողմից ողջ ուսումնական տարվա ընթացքում 2.Համակարգիչը կհեշտացնի սպասարկման			v		v	v	

			գործընթացը 3.Գիրք նվիրելու ակցիա կազմակերպել տարին 1 անգամ, նաև համագործակցել տարբեր հրատարակչությունների հետ:							
9	Համակարգչային ապահովվածության բարելավում	Համակարգչային կաբինետը համալրման կարիք ունի	Առարկայի դասավանդումը, ունենալով գործնական ուղղվածություն, բավարար քանակի համակագիչների , էլեկտրոնային գրատախտակի առկայության դեպքում կապահովի բարձր արդյունավետություն:	v				v	v	
10	Ուսումնական այլ նյութերի ձեռքբերում՝ ըստ դասավանդվող առարկաների	Անհրաժեշտ են 1.երկրաչափական գործիքներ, երկրաչափական մարմինների մակետներ 2.առարկայական տեսաֆիլմեր, պաստառներ, մակետներ, լաբորատոր փորձերի համար տարաբնույթ նութեր, պարագաներ:	Դրանց առկայությունը կմոտիվացնի սովորողներին, կխթանի հետաքրքրությունը, դյուրին կդարձնի ընկալումը՝ ազդելով կրթական որակի վրա:	v						v

	Նպատակ 2. Հանրակրթության ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում:									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ուսուցչի հեղինակության և դերի բարձրացում	Ուսուցչի հեղինակության անկման պատճառները ինչպես գլոբալ են, այնպես էլ տեղային: Տեխնոլոգիաների զարգացման արդյունքում այսօր ձևավորվել են գործունեության ձևեր, որոնք շատ ավելի մեծ ազդեցություն են գործում սովորողների վրա, քան ուսուցիչները:Տեխնոլոգիանե-րը սովորողի ուղեղի շատ ավելի մեծ հատվածներ են ակտիվացնում, քան դասագիրքը և ուսուցչի խոսքը: Ուսուցիչը հայտնվել է մրցակցության մեջ՝ չունենալով սովորեցնելու մենաշնորհ: Բացակայում են ֆինանսական խթանները, մրցունակ աշխատավարձը, իսկ տեխնոլոգիաների հետ	Ուս. տարիների ընթացքում աշխատանքային ծանրաբեռվածությունը նվազեցնել՝ զուգահեռ բարձրացնելով աշխատավարձը: Վերանայել մանկավարժական կադրեր պատրաստող բուհերի ռազմավարությունը: Ոսուցչին մոտիվացնել, որպեսզի նա էլ սովորողին մոտիվացնի:	v	v					

		մրցակցության մեջ մտնելը. համացանցը, զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը ազդում են ուսուցչի հեղինակության վրա, նորագույն տեխնոլոգիաներին և պահանջներին չտիրապետելը չի համապատասխանում 21-րդ դարի կրթական մարտահրավերներին								
2	Որակյալ մասնագետների ներգրավում և ուսուցչի թափուր աշխատատեղերի համալրում:	Ուսուցչի ցածր վարձատրվող մասնագիտությունը գրավիչ չէ որակյալ մասնագետների համար:	Ատեստավորման արդյունքում գուցե որակյալ մասնագետների ներհոսք ապահովվի դպրոց:	V						
3	Ուսուցիչների կարողությունների զարգացում և ընթացիկ մասնագիտական աջակցության կազմակերպում	1.Շարունակական ինքնակրթության, մասնագիտական թարմացումների անհրաժեշտություն 2.Ուսուցիչների համագործակցությունը, փորձի փոխանակումը,	Ապահովել ուսուցիչների շարունակական ինքնակրթությունը: Ուսուցիչներին ընդգրկել տարատեսակ մասնագիտական դասընթացներում, վերապատրաստումներում: Իրականացնել ուսուցչի գործունեության մշտադիտարկում՝ օգնելով ուսուցիչներին իրատեսորեն պլանավորել դասապրոցեսը՝ հստակ չափելի նպատակներով, խնդիրներով և վերջնարդյունքով: Խրախուսել ուսուցիչների	v	v					

		ինտեգրված դասերի թեմատիկ միավորների ստեղծումը պարբերական չէ:	համագործակցությունը, փորձի փոխանակումը, ինտեգրված դասերի թեմատիկ միավորների ստեղծումը:							
4	Ուսուցիչների և մյուս աշխատակիցների համար համակարգչային նվազագույն գիտելիքների ուսուցում (Word, Excel, PPT, հեռավար ուսուցման ծրագրեր, որոնման համակարգեր և այլն)	Ուսուցման կառավարման համակարգերի և ՏՀՏ գործիքների անբավարար տիրապետում	Դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչը և վերապատրաստված ուսուցիչները, որպես մենթոր հանդես գալով, գործընկերների համար կլուծեն համակարգչային գիտելիքների ձեռքբերման խնդիրը:	v	v			v		
6	Ուսուցիչների արդյունա-վետության գնահատում և լավագույն ուսուցիչների խրախուսում	Ուսուցչի լավ աշխատանքը գնահատող խրախուսանքի մեխանիզմի բացակայություն, ԶԼՄ-ներով ուսուցչի գործունեության լուսաբանման պակաս:	Ուսուցչի արդյունավետության գնահատման չափանիշ համարել պլանավորված և ոչ պլանավորված դասալսումները, օրինակելի դասերը, արտաքին գնահատման արդյունքները, ուսուցչի սաների ցուցաբերած արդյունքները, ծնողական համայնքի համարժեք վերաբերմունքը; Ուսուցչի օբյեկտիվ գնահատումը նրա առաջընթացի գնահատականն է;	v	v		v			
7	Տնօրենի՝ դպրոցի կառավարման կարողությունների զարգացում, փորձի	1.Արտակարգ իրավիճակներում ճկուն մարտավարություն մշակելու կարողություն	Զարգացնելով անձնային, մասնագիտական որակները՝ մեծ ազդեցություն կապահովվի մանկավարժական անձնակազմի մոտիվացիայի վրա, քանի որ այդ որակները		v					

	փոխանակում	2.Վերահսկողության մեխանիզմների կատարելագործում ըստ անհրաժեշության, խնդիրների թիմային լուծում	ձևավորում են ներկազմակերպական մթնոլորտն ու վերաբերմունքը ուսումնական հաստատության և աշխատանքի նկատմամբ: Համալրելով և կատարելագործելով մանկավարժական և հոգեբանական գիտելիքները՝ տնօրենը կրթական գործընթացի մասնակիցներին ավելի լավ կհասկանա և ուսումնական գործընթացը դյուրին կդառնա: Կատարելագործելով հաղորդակցման հմտությունները՝ հստակ կարտահայտի մտքեր, կարծիքներ: Նվիրվածությունն ու պատասխանատվությունը, օրինապահությունն ու սկզբունքայնությունը կմոտիվացնի կոլեկտիվին :Տնօրենը նախ լավ մանկավարժ պետք է լինի, հետո նոր լավ կառավարիչ;							

8	Տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կարողությունների զարգացում, փորձի փոխանակում:	Ուսուցիչների հետ հաղորդակցվելու կարողությունների զարգացում, մանկավարժական էթիկայի պահպանում, ժամանակակից դասի պահանջների ներկայացման կարողություն, ուսուցիչ- փոխտնօրեն առողջ համագործակցության անհրաժեշտություն	Անձնային որակները՝ պատասխանատվության զգացում, բարություն, համոզելու, ռիսկի դիմելու կարողություն, բարձր աշխատունակություն, ինքնավերահսկման հմտություն, հանդուրժողականություն, համակողմանի զարգացվածություն, ճիշտ արժեհամակարգ, կնպաստեն կոլեկտիվի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը: Կրթական գործընթացը կշահի, եթե փոխտնօրենը ըմբռնի սովորողների, ուսուցիչների և աշխատակիցների հոգեբանական առանձնահատկությունները, տեղեկացված լինի ոլորտի զարգացումներին, ըմբռնի և կիրառի նորարարությունները:	v	v					
9	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի կարողությունների զարգացում, փորձի փոխանակում	ԴԱԿ –ի նախաձեռնողական կարողությունների առավելագույն դրսևորում	Համայնքի դպրոցների ԴԱԿ –երի հետ հանդիպումներ, համատեղ միջոցառումներ, փորձի փոխանակում: Սովորողների կարողությունների ճանաչում և ճիշտ ուղղորդում, աշակերտական խորհրդի աշխատանքների արդյունավետ համակարգում		v			v		
10	Զինղեկի կարողությունների զարգացում, փորձի		Մարզային և տարածքային զինղեկների կազմակերպված հավաքները կնպաստեն փորձի փոխանակմանը		v			v		

	փոխանակում									
11	Քաղպաշտպանության շտաբի պետի կարողությունների զարգացում, փորձի փոխանակում		ՔՊ շտաբի պետի մասնակցությունը մարզային ԱԻ և ՔՊ կողմից կազմակերպած սեմինարներին և միջոցառումներին կապահովի փորձի փոխանակում և զինղեկի կարողությունների զարգացում		v			v		
	Նպատակ 3. Կրթության պայմանների և որակի բարելավում, աշակերտների մրցունակության բարձրացում, համակողմանի զարգացում, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակում և մասնագիտական կողմնորոշման ապահովում									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Առարկայական դասավանդման պայմանների բարելավում	ա/ Բնագիտական առարկաների դասավանդումը կաբինետային համակարգով չէ բ/յուրաքանչյուր դասասենյակում էլեկտրոնային գրատախտակի , տեսացրիչի, համակարգչի, ինտերնետային կապի բացակայություն գ/մեդիագրագիտության	Մաթեմատիկայի դասագրքի մատչելի լինելը կնպաստի սովորողների կողմից նյութի ինքնուրույն յուրացմանը; Մաթեմատիկայի զարգացման և ուսուցման մեթոդների միջև առկա հակասությունների վերացումը կնպաստի մանկավարժի աշխատանքի և սովորողների ընկալման դյուրինացմանը: Ուսումնական նյութի ծավալի ու բովանդակության միջև առկա հակասությունների վերացումը կնպաստի միջին և թույլ կարողությունների տեր սովորողների ակտիվության և	v	v			v		

		բացակայություն դ/ հակասություններ սովորողների կոլեկտիվ կրթական աշխատանքի և նրանց կողմից գիտելիքների յուրացման անհատական հատկություններ միջև ե/ ուսումնական նյութի ծավալն ու բովանդակությունը մաթեմատիկայի դասագրքերում հակասական են, դասագրքի նյութը բավարար չափով մատչելի ու մանրամասն չէ աշակերտների կողմից ինքնուրույն տեղեկատվություն ստանալու համար զ/պատմության միայն տեսական ուսուցման միջոցով հայրենաճանաչողություն, ինքնության ճանաչում, արժեքային համակարգի	առաջադիմության բարձրացմանը:							

		ձևավորում չի ապահովվում: Պատմության դասագրքերը լրացնելու, դրանց այլընտրանք ունենալու իմաստով կարևորվում է պատմական աղբյուրներ պարունակող տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, որոնք ինտեգրված գիտելիք հաղորդելու և սովորողների հիմնարար հմտություններ ձևավորելու կարևորագույն միջոցներն են, է/ մանկավարժների ծանրաբեռնվածություն, շարունակական ինքնակրթության ժամանակի և մոտիվացիայի պակաս							

2	Առարկայական դասավանդման արդյունավետ մեթոդների կիրառում	ա/ Ժամանակակից մանկավարժության մեթոդական պահանջներին տեղեկացված և հաղորդակից չլինելը բ/ ստեղծագործական ինքնուրույն մտածողությանը հակադրվում է թեստային մտածողությունը գ/ ուսուցչի դերի փոխարինում գիտելիք հաղորդողից սովորել սովորեցնողի դերով։ Առաջնորդվելը ոչ թե ինչ, այլ ինչպես մեթոդաբանությամբ։	Վերոհիշյալ հիմնախնդիրների լուծումը կհստակեցնի դասավանդման հայեցակարգը՝ ինչպես դասավանդել, ինչ արդյունքներ ակնկալել։Թույլ կտա զերծ մնալ կարծրատիպային մեկնաբանություններից, կիրառել բազմաբնույթ մեթոդական հնարներ, դասավանդումը չվերածել սոսկ փաստերի ուսուցման։	v	v					
3	Աշակերտների համար առկա և առցանց լրացուցիչ կրթական ռեսուրսների և հնարավորությունների ապահովում	ա/ ինտերնետ կապի թույլ հասանելիություն բ/ պլանշետների, համակարգիչների առկայության պակաս	Նշված խնդիրների լուծման դեպքում սովորողների ընդգրկվածությունը լիարժեք կդառնա , կապահովվի կրթության շարունակականությունը։	v	v			v		

4	Աջակցել աշակերտներին առարկայական օլիմպիադաներին մասնակցության գործում	ա/Սովորողների նպատակային ուսումնառության կողմնորոշման բացակայություն, բ/ առարկայական, մարզային և հանրապետական օլիմպիադաներում մրցանակակիրների բացակայություն, գ/ հայտնաբերել օժտված երեխաներին, հանձնարարել համապատասխան մանկավարժներին անհատական աշխատանքներ կատարել:	Մոտիվացնել, ուղղորդել սովորողներին նպատակային ուսումնառության՝ առաջարկելով լրացուցիչ պարապմունքներ, հանձնարարություններ այլընտրանքային դասագրքերից, ծնողների ներգրավվածությամբ մոտիվացնել բարձր առաջադիմությամբ սովորողներին: Արդյունքում կզարգացվեն սովորողների հմտություններն ու կարողությունները /համառություն, սեփական ուժերի նկատմամբ վստահություն, պատասխանատվություն/, սովորողները կմոտիվացվեն հաջողություններ ձեռք բերելուն, մրցանակային տեղեր գրավելուն:		v					
5	Աջակցել աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում	Մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումները բավարար չեն:	Սովորողների համար կազմակերպել ճանաչողական այցեր փաստաբանական , նոտարական գրասենյակներ, բուհեր, մասնագիտական ուսումնական հաստատություններ և այլն: Արդյունքում կծանոթանան տվյալ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններին, դրանցում աշխատելու համար		v	v				

			մասնագիտական կարողություններին:							
6	Աշակերտների համար ստեղծել հնարավորություն՝ շփվելու մշակութային, հասարակական-քաղաքական գործիչների հետ :		Կնպաստի սովորողների մտահորիզոնի, աշխարհայացքի, աշխարհաճանաչողության ընդլայնմանը, արժեհամակարգի հարստացմանը, կօգնի մասնագիտական կողմնորոշմանը; Զերծ կպահի վնասակար սովորություններից, սովորողը կգնահատի կրթության դերը իր ապագայի կառուցման գործում:		v		v	v		
7	Զարգացնել աշակերտների քննադատական մտածողությունը, մեդիագրագիտությունը, հանրային ելույթի և բանավիճելու կարողությունները:	Ուսումնառությունը որպես կանոն կառուցվում է գիտելիք հաղորդելու հենքով, մեդիադաշտում սովորողների կողմնորոշումը սահմանափակ է,կա կառուցողական մտածողության, բանավիճելու մշակույթի բացակայություն:	Դասապրոցեսում և դասապրոցեսից դուրս կազմակերպել դեբատներ, կլոր սեղաններ, դերային խաղեր՝ վերհանելով ինչպես դպրոցի, այնպես էլ համայնքի հիմնախնդիրները: Հիմնախնդիրները խորությամբ ուսումնասիրել առաջնային աղբյուրների միջոցով, կատարել հետազոտական աշխատանք, կազմակերպել հանդիպումներ համապատասխան մասնագետների հետ: Պատրաստվել հանրային ելույթի ինչպես կողմ, այնպես էլ դեմ ձևաչափով: Լսել հանրային գործիչների ելույթներ, ուշադրություն դարձնել նրանց խոսքի ուժին, առոգանությանը, վստահելիությանը, համոզիչ և փաստարկված լինելուն:		v			v		

8	Նախաձեռնել միջոցառումներ և ծրագրեր՝ ուղղված աշակերտների՝ պետականության դերի գիտակցմանը, ազգային մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, հայրենասիրական, մարդասիրական, քաղաքացիական և էկոլոգիական ուսուցմանը և դաստիարակությանը	Ապագա լիարժեք քաղաքացու ձևավորումը ոչ միայն հայրենասիրության, այլև ռեֆլեքսիվ մտածողության զարգացման մեջ է՝ ինչու, ինչպես ձևաչափով, որը չի կարևորվում:	Սովորողների արժեհամակարգի ձևավորում ինչպես բուն դասապրոցեսում, այնպես էլ ճանաչողական էքսկուրսիաների, բնապահպանական , հայրենասիրական ակցիաների , պատմամշակութային հուշարձանների խնամքի ու պահպանության, պետական խորհրդանիշների հարգանքի, ազգային պետական տոների արժևորման, Ազգային հերոսներին հարգանքի տուրք մատուցելու միջոցով:		v	v	v	v		
9	Նպաստել աշակերտների գեղագիտական դաստիարակությանը, ստեղծագործական կարողությունների դրսևորմանը և զարգացմանը:		Արվեստների դասավանդումը, սովորողների ճանաչողական էքսկուրսիաները թանգարան, պատկերասրահ ձևավորում է մտածելակերպի ազատություն, ստեղծարար մտածողության, երևակայության ամրապնդում:		v	v	v	v		
10	Կիրառել դուալ, հեռավար և ոչ ֆորմալ		9-րդ,10-րդ դասարանի սովորողները ընդգրկված են IMPACT ծրագրում, որի		v			v		

	կրթության հնարավորությունները:		շրջանակներում ձեռք են բերում ակտիվ քաղաքացու որակներ, քաղաքացիական հասարակության մասին գիտելիքներ, սեփական իրավունքների ճանաչողություն, համագործակցության հմտություններ:							
11	Համագործակցել տարածքում գործող դպրոցների, ՏԻՄ-երի, հիմնարկ-ձեռնարկությունների, մշակութային օջախների, ՀԿ-ների հետ, աշակերտների համար կազմակերպել ճանաչողական այցեր վերոնշյալ կառույցներ:				v		v			
12	Աշակերտների մոտ խթանել կամավորականության մշակույթը:		Համագործակցելով տարածքային ՀԿ –ների հետ/, World Vision, Կարիտաս/ , կազմակերպել շաբաթօրյակներ, սովորողներին մասնակից դարձնել <<Բարի գործեր>> ակցիային, պատմամշակութային հուշարձանները խնամելու, դպրոցամերձ այգին խնամելու, դպրոցական գրադարանը հարստացնելու աշխատանքներին:		v			v	v	

13	Նպաստել աշակերտների կարողությունների զարգացմանը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և ռոբոտաշինության ոլորտներում ։		Համայնքում գործող Ռոբոտաշինության խմբակի աշխատանքներին մեծ թվով սովորողներ ներգրավել, խրախուսել՝ կազմակերպելով աշխատանքների տոնավաճառ /հրավիրել ՏԻՄ ներկայացուցիչների, ծնողների, համայնքի ներկայացուցիչների/։ Ձեռք բերված գումարը նպատակաուղղել դպրոցի կարիքներին: Սովորողները լուծումներ կփնտրեն դպրոցական որոշ ֆունկցիաների ավտոմատացման ուղղությամբ /խելացի դպրոց/։							
14	Նպաստել աշակերտների մոտ առողջ ապրելակերպի ամրապնդմանը։		Կնպաստի գեղեցիկ կեցվածքի, կոփված կազմվածքի ձևավորմանը; Պահպանելով անձնական հիգիենա՝ կկանխարգելվի վիրուսներով վարակվելու վտանգը։	v	v			v		
15	Կազմակերպել տարաբնույթ մարզական միջոցառումներ, առաջնություններ, մրցույթներ և թեմատիկ վիկտորինաներ։		Ակնկալվող արդյունքում կստեղծվի սովորողի ձևավորումն ու զարգացումը ապահովող բարենպաստ պայմաններ, կարմատավորվեն հետևյալ հատկանիշները՝ նախաձեռնողականություն, ճկունություն, իրավիճակային լուծումներ գտնելու, ստեղծագործաբար մտածելու կարողություն, հմտություն:		v		v			

16	Համագործակցելով այլ կազմակերպությունների հետ՝ ուսումնաարտադրական բազաներում, մարզաառողջարարական ճամբարներում սովորողների ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպում	Բացակայում են համագործակցության պայմանները;	Արշավները, ճամբարները ձևավորում են այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ ինքնուրույնությունը, համառությունը, աշխատասիրությունը, նախաձեռնողականությունը, համարձակությունը, հոգատարությունը, թիմային աշխատանքի հմտությունները: 1-օրյա, բազմօրյա արշավները ձևավորում են ապագայի հայրենասեր քաղաքացիներ։**Հայրենասիրությունը, ազգային արժեքների նկատմամբ հոգատար վերաբերմունքը սկսվում է հայրենաճանաչողությունից:**	v	v		v	v	v	
17	Երկարօրյա ուսուցման կազմակերպում		Երկարօրյա ուսուցման կազմակերպումը կնպաստի բաց թողած նյութի արագ յուրացմանը,կրթության որակի բարձրացմանը։							
18	Հեռավար կրթության մեթոդների կատարելագործում	Հեռավար կրթության արդյունավետության ոչ բավարար լինելը, մեթոդների իրազեկվածության պակասը զգալիորեն ազդում են կրթության որակի վրա։	Հեռավար կրթության գործիքներին և մեթոդներին տիրապետելով՝ կապահովվի սովորողների ավելի մեծ լսարան, ուսումնական միջավայրի ճկունություն՝ համաժամանակյա և ոչ համաժամանակյա ուսուցմամբ, ուսուցիչները կկարողանան օգտվել պատրաստի ռեսուրսներից: Հեռավար գործիքները թույլ կտան իրականացնել	v				v	v	v

			սովորողների ուսուցանող և միավորային գնահատում: Կապահովվի բարձր մոտիվացիա:							
	Նպատակ 4. Դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Մանկավարժական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում	Ուսուցիչները հանդես չեն գալիս համարձակ առաջարկություններով, թերությունների լուսաբանումը խորքային չէ: Լավագույն աշխատանքի փորձի փոխանակման գործընթացը բավարար չէ:	Մանկխորհրդում համակողմանի, անաչառ վերլուծությունները կբարձրացնեն աշխատանքի արդյունավետությունը, կշտկվեն թերությունները, լավագույն աշխատանքի փորձը կտեղայնացվի:		v					

2	Առարկայական մեթոդական միավորումների գործունեության արդյունավետության բարձրացում	Մասնախմբի ղեկավարների աշխատանքային ծանրաբեռնվածությունը թույլ չի տալիս ակտիվ դասալսումներ իրականացնել, զբաղվել ստեղծագործական աշխատանքով:	Մասնախմբերը փորձի փոխանակման լավագույն հարթակ կդառնան, կիրազեկվեն հոգեբանամանկավարժական, մասնագիտական, մեթոդական նորույթներին:		v					
3	Ծնողական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում	Ծնողական խորհուրդը պասիվ է, իր գործառույթների ծավալով ներգրավված չէ դպրոցական կյանքին;	Ծնող-դպրոց կապը կարելի է ամրապնդել՝ սովորողների և ծնողների ստեղծագործության օրեր հայտարարելով, մասնակից դարձնելով բաց դասերին և արտադասարանական միջոցառումներին, ծնողական հսկողություն սահմանելով միջանցքներում և դասասենյակներում:		v	v				
4	Աշակերտական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում	Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս որպես կատարող՝ չիրացնելով ինքնավարության իր գործառույթները:	Խորհրդի աշխատանքները բաժանելով ըստ կարողությունների և հմտությունների, խրախուսելով նախաձեռնությունները՝ կապահովվի արդյունավետություն, սովորողները ձեռք կբերեն ինքնուրույնություն, ապագա ակտիվ քաղաքացու որակներ, կկարողանան պաշտպանել իրենց		v	v				

			իրավունքները:							
5	Դասալսումների արդյունավետության բարձրացում	Դասալսումները երբեմն ինքնանպատակ են՝ ոչ արդյունավետ վերլուծություններով:	Հստակեցնելով դասալսման նպատակները, չափելի խնդիրներն ու վերջնարդյունքը, հմտությունների և կարողությունների զարգացումը, ապահովելով իրական կյանքի հետ կապը՝ կբարձրանա դասալսումների արդյունավետությունը:		v					
6	Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում և ներգրավում կրթական գործընթացում		Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերմամբ և ներգրավումով կիրացվի նրանց կրթության իրավունքը:		v	v	v			
7	Դպրոցի հաստիքացուցակի, նախահաշվի և տարիֆիկացիայի հրապարակման և թափանցիկության ապահովում				v	v	v			
8	Աշխատակիցների ստեղծագործական նախաձեռնության	Դպրոցի բյուջեի սղությունը թույլ չի տալիս կիրառել դրամական խրախուսման	Աշխատակիցների ստեղծագործական նախաձեռնության խրախուսումն և խթանումը <<վարակիչ>> օրինակ, մոտիվացիայի աղբյուր		v					

	խրախուսում և խթանում	ձևը:	կդառնան մյուսների համար:							
9	Կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում		Կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը կբարձրացնի կրթության որակը,կստեղծի առողջ հարաբերություններ կրթության գործընթացի մասնակիցների միջև:		v					
10	Դպրոցի հարակից տարածքում աշակերտների ներգրավմամբ ստեղծել կանաչ տարածքներ, ոչ ավանդական մշակաբույսերի փորձադաշտեր, այգիներ , պուրակներ:		Սովորողների համար կանաչ տարածքների ապահովումը մեծապես կազդի նրանց աշխարհայացքի վրա.նրանք կհասկանան, որ իրենց ձեռքերում է մոլորակի ապագան:Անվանական ծառեր տնկելով և խնամելով՝ կնեծանա նրանց պատասխանատվության զգացումը:		v		v		v	v
13	Բարելավել դպրոցի մարզադաշտը, գույքով համալրել դպրոցի խաղահրապարակները, ապահովել մարզասարքերի և խաղասարքերի անվտանգ շահագործումը	Դպրոցն ունի մեծ խաղահրապարակ՝ վնասված ասֆալտով: Ֆուտբոլի համար բացակայում է խոտածածկ տարածքը:	Հիշյալ խնդիրների լուծման դեպքում խաղահրապարակը կծառայի ոչ միայն սովորողների, այլև համայնքի կարիքներին: Կպահպանվեն անվտանգության կանոնները: Խնդրի լուծումը կնպաստի սովորողների առողջ ապրելակերպին, նրանք զերծ կմնան վնասակար սովորություններից, կամրապնդվի համայնք-դպրոց կապը:	v				v	v	v

14	Դպրոցի բակում անվտանգ և բարեկարգ միջավայրի ապահովում	Դպրոցի բակը բարեկարգելու համար անհրաժեշտ է 30 x 15 ասֆալտապատ տարածք շարահրապարակ գծելու համար, աստիճանների վերանորոգում:	ՆԶՊ –ի գործնական աշխատանքների արդյունավետությունը կբարձրանա:	v			v	v	v	v
15	Դպրոցի հարակից տարածքում անվտանգ երթևեկության ապահովում՝ համագործակցելով պատկան մարմինների հետ:	Դպրոցի մուտքի հարակից տարածքը խիտ երթևեկելի է,ոչ բարեկարգ:	Դպրոցի ճանապարհներին ավելացնելով մեքենաների արագությունը արգելափակող պատնեշներ՝ երկկողմանի արհեստական խոչընդոտը կապահովի անվտանգ միջավայր, կխուսափենք վթարային իրավիճակներից: Դասղեկական ժամերը այդ նպատակով ևս կծառայեն անվտանգության կանոնների իրազեկմանը:				v			
16	Հակահրդեհային պաշտպանության և աշխատանքի անվտանգության տեխնիկայի ապահովման բարելավում	Հակահրդեհային շիթի բացակայություն:	Շիթի առկայությունը հրդեհի դեպքում կբարձրացնի մարման աշխատանքների ՕԳԳ-ն:		v					
18	ՀՀ և արտերկրի հանրակրթական դպրոցների հաջողված փորձի ուսումնասիրում	Փորձի տեղայնացման նախադեպ չկա:	Ֆիննական , չինական , էստոնական,ճապոնական կրթական մոդելները շեշտադրում են սոցիալական հմտությունների զարգացումը: Դրանք	v	v					

	և դրանց որոշ տարրերի տեղայնացում		ներառում են. 1.Գնահատման թվանշանային համակարգի բացակայություն տարրական օղակում, երկրորդ և երրորդ աստիճաններում, գնահատում ոչ թե ըստ ստանդարտների, այլ նախորդ ձեռքբերումների համեմատությամբ: 2. Թեստային մտածողության փոխարեն ստեղծարար, ինքնուրույն մտածողություն: 3. Կրթական վերոհիշյալ մոդելները սովորեցնում են սովորել՝ տալով մտածողության բանալիներ: 4. Անհատական մոտեցում, որն արտահայտվում է նախագծային աշխատանքի մեթոդով: 5.Կարևորվում է դասի վերջնարդյունքը, կապը իրական կյանքի հետ: 6.Համագործակցային միջավայրի ստեղծում. ուսումնական այս միջավայրում սովորողն ավելի ուժեղ է և ինքնավստահ:							

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը հիմնական և, հաճախ, միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար կամ անբավարար լինելն է:

Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները.

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
2. Եկամտահարկի վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում:

3. Գրասենյակային և տնտեսական ծախսեր
4. Գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են:

5. Կապի ծառայությունների ծախսեր
6. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր
7. Ջրմուղ-կոյուղու ծառայությունների գծով ծախսեր
8. Կոմունալ ծառայությունների վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ֆինանսական միջոցների սղության դեպքում դպրոցի տնօրենը կարող է

- Իր վրա վերցնել վերապատրաստումներ իրականացնելու պատասխանատվությունը:
- Գտնել դպրոցում այնպիսի մասնագետներ, ովքեր կարող են ինքնուրույն ուսումնասիրել և այնուհետև կամավորական հիմունքներով վերապատրաստել իրենց գործընկերներին:
- Ստանալ ԿԶՆԱԿ-ի աջակցությունը:
- Դիմել տարբեր բարեգործների՝ օժանդակությունը ստանալու համար:
- Մասնակցել դրամաշնորհային ծրագրերին:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԶԴՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԶԾ-ի նպատակադրումների իրագործմանը խոչընդոտող ռիսկերը բազմաբովանդակ են և դրանք, ըստ ազդեցության ուղղությունների, խմբավորել ենք հետևյալ կերպ.

1. դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ,
2. դպրոցի վերահսկողությունն իրականացնող պետական մարմինների կողմից դպրոցի գործունեությանը հնարավոր բացասական միջամտություններ,
3. դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ,
4. դպրոցի ֆինանսական սահմանանափակ հնարավորություններ,
5. դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն,
6. դպրոցի միջավայրի և ձևավորված մշակույթի խոչընդոտներ,
7. ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն ,
8. դպրոցի գործունեության վերաբերյալ համայնքում ձևավորված կարծրատիպեր,
9. դպրոցի կողմից կատարած աշխատանքների հաշվետվողականության մեխանիզմների անկատարություն:

ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցմանն ուղղված գործողություններն են՝
   - ✍ Դպրոցի առաքելության, նպատակների, խնդիրների և դրանց իրականացմանն ուղղված գործողությունների պլանի համակողմանի ներկայացումը դպրոցի կառավարմանը մասնակցող մարմիններին,
   - ✍ նրանց մասնակից դարձնել կառավարման աշխատանքներին։
2. Դպրոցի վերահսկողությունն իրականացնող պետական մարմինների կողմից դպրոցի գործունեությանը հնարավոր բացասական միջամտությունների նվազեցմանն ուղղված գործողություններն են՝
   - ✍ Պատշաճ կազմակերպել կրթական գործընթացը,
   - ✍ բարձրացնել դպրոցի, մանկավարժների հաշվետվողականության, պատասխանատվության մակարդակը՝ կատարած աշխատանքների նկատմամբ։
3. Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչնդոտների նվազեցմանն ուղղված գործողություններն են՝
   - ✍ ուսուցիչների ծանրաբեռնվածության նվազեցում,
   - ✍ խրախուսել և հորդորել ուսուցիչներին՝ մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանն ուղղված մրցույթներին մասնակցելու համար։
4. Դպրոցի ֆինանսական սահմանանափակ հնարավորությունների լրացմանն ուղղված գործողություններն են՝

- ✍ մասնակցել դրամաշնորհային ծրագրերի

5. Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածությանն ուղղված գործողություններն են՝
   - ✍ համայնքի ուշադրությունը հրավիրել այդ հարցի վրա,
   - ✍ բարեգործական կազմակերպությունների հետ շարունակական համագործակցություն:
6. Դպրոցի միջավայրի և ձևավորված մշակույթի խոչընդոտներին ուղղված գործողություններն են՝
   - ✍ դպրոցական կյանքին մասնակից դարձնել համայնքին, համայնքի պատասխանատուներին,
   - ✍ դպրոցական միջոցառումները դարձնել համայնքային:
7. Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեությանը մասնակցությունն ակտիվացնելուն ուղղված գործողություններն են՝
   - ✍ դպրոցական կյանքին մասնակից դարձնել ծնողներին,
   - ✍ կազմակերպել «Ծնողական կրթություն»՝ թեմաները համապատասխանեցնելով ծնողների կարիքներին,
   - ✍ Կիրառել խրախուսանքի տարբեր ձևեր. «խրախուսանքի գիտակցությունն ու սպասումը կարող են մեծ ազդեցություն ունենալ անձի վարքում և ուսումնառության վրա»: Խրախուսել թե՛ սովորողին, թե՛ սովորողի ծնողին, թե՛ ուսուցչին: Դպրոցի տոնացույցում «Ընտանիքի օր» նշելը դարձնել ավանդույթ՝ ամրապնդելով դպրոց-ընտանիք կապը:
   - ✍ դպրոցի հաշվետու միջոցառումներին մասնակից դարձնել նաև ծնողներին:
8. Դպրոցի գործունեության վերաբերյալ համայնքում ձևավորված կարծրատիպերի վերացմանն ուղղված գործողություններն են՝
   - ✍ ամրապնդել դպրոց-համայնք կապը դասալսումների, միջոցառումների, ծնողական ժողովների, հանդիպումների

միջոցով,

- ✍ տեղեկատվական միջոցների միջոցով ժամանակ առ ժամանակ հաղորդումներ պատրաստել ու ներկայացնել համայնքի բնակչությունը:

9. Դպրոցի կողմից կատարած աշխատանքների հաշվետվողականության մեխանիզմների անկատարության հաղթահարմանն ուղղված գործողություններն են՝

- ✍ ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա պլանի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է ԴԶԾ-ի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ԴԶԾ-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան:
- ✍ Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է այն հավանության արժանացրացրած դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

ՏԵՍԼԱԿԱՆ

1. *Հարստացնել ՏՀՏ նյութատեխնիկական բազան:*
2. *Դպրոցում ներմուծել «Անձնական պատասխանատվության» դաս, որի ընթացքում սովորողը մի ամբողջ տարի կպարտավորվի համայնքի որևէ հատվածում զբաղվել կամավորական գործով՝ ծառեր տնկել, խնամել, ծերերին համակարգչով աշխատել սովորեցնել, վերցնել որևէ «X» տարածք և զբաղվել դրա մաքրությամբ (համայնքի հուշարձաններ), մասնակցել հանրօգուտ աշխատանքների և այլն: Արդյունքում կկերտենք այն անհատին, ով իր վրա պատասխանատվություն վերցնել է սովորում, ստանում է արդյունք ու գնահատվում, ինչն էլ կնպաստի միմյանց և միջավայրի նկատմամբ անտարբերությունը վերացնելուն:*
3. *«Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ծառայություններից օգտվող սովորողների թվի ավելացում և համապատասխան մրցույթներում մրցանակային տեղերի ակնկալում:*
4. *Գրադարանային ֆոնդի համալրում՝ ի նպաստ սովորողների ընթերցողական կարողությունների զարգացման:*
5. *Միջդպրոցական օլիմպիադաների, ներդպրոցական առարկայական վիկտորինաների, մշակութային միջոցառումների կազմակերպում(ազգային տոների, ծիսական խաղերի ,ուտեստների հանրայնացում):*
6. *Անվանի գրողների, արվեստագետների, երաժիշտների հետ հանդիպումների կազմակերպում:*
7. *Մարզային և հանրապետական փուլերում օլիմպիադաների մասնակիցների թվի ավելացում և մրցանակային տեղերի ակնկալում (օժտված երեխաների բացահայտում և նրանց հետ հատուկ աշխատանքի իրականացում):*
8. *Բարերարներ ներգրավելու գործընթացի մեկնարկ մեկ դասասենյակի կահավորման ակցիայով՝ բարերարի «Անվանական ցուցանակ» տեղադրելով: Այն կմոտիվացնի շատերին՝ անվանական դասասենյակներ ունենալու տեսլականով:*

9. *Դպրոցի ֆիզիկական միջավայրի բարելավում. մուտքերի մոտ թեքահարթակների պատրաստում:*

10. *Խրախուսանքի տարբեր ձևերի կիրառում պատվոգրերի, նպատակային էքսկուրսիաների, թանգարաններ և մշակութային օջախներ այցելությունների տեսքով՝ խրախուսելով թե՛ սովորողին, թե՛ սովորողի ծնողին, թե՛ ուսուցչին:*

11. *Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում՝ դպրոցի տոնացույցում «Ընտանիքի օր» նշելը դարձնելով ավանդույթ:*

Մեր կարգախոսը.

Միասնական ոգի

Բարձր կարգապահություն

Համակարգված աշխատանք

Կրթության որակ